BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

22 Մարտ 2013թ.

N 011302

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ 0054՝ տրված ՀՀ ֆինանսների և Էներգետիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի
Բաժնետերերին

Մենք իրականացրել ենք «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվության շրջանակներում է համապատասխան ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման համար, հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում նպատակահարմար հաշվապահական գնահատումների կատարումը:

BAKER TILLY
ARMENIA

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պահպանենք էթիկայի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորն ուղումնասիրում է «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է հաշվապահական հաշվառման կիրառվող քաղաքականության համապատասխանության և ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները համապատասխան ու բավարար հիմք են մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ ու իրական պատկերը, իսկ հաշվապահական հաշվառումը «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան:

Աուդիտոր

Կ.Ասսիլյան

18.03.2013թ.